

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

19.10.2018

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 20-ը.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփման մասին /Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան/:
2. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփումը: Նա նշեց, որ լուծարքային շրջանը կազմակերպվել է ժամանակացույցի համապատասխան, խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել: Լուծարքային շրջանին մասնակցած ուսանողների գերակշիռ մասը դրական գնահատական են ապահովել 1-ին լուծարքային շրջանի ժամանակ: Զեկուցողը ըստ կուրսերի ներկայացրեց լուծարքային շրջանի ընդհանուր պատկերը.

Պատմություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 10 ուսանող, որոնցից 6-ը 1-ին լուծարքային շրջանում, իսկ 4-ը՝ 2-րդ լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ:

Տարրական մանկավարժություն և մեթոդիկա կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 13 ուսանող, որոնցից 10-ը 1-ին լուծարքային շրջանում, իսկ 3-ը՝ 2-րդ լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ: 1 ուսանող՝ Մերի Ճաղարյանը, հեռացվել է մասնաճյուղից բոլոր առարկաներից անբավարար գնահատականեր ստանալու պատճառով:

Օտար լեզու և գրականություն, Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտություններով լուծարքային շրջանին մասնակցել է 4 ուսանող, որոնցից 3-ը դրական գնահատականներ են ստացել 1-ին լուծարքային շրջանում: 1 ուսանող՝ Հրաչ Ներսիսյանը, հեռացվել է մասնաճյուղից բոլոր առարկաներից անբավարար գնահատականներ ստանալու պատճառով:

Հոգեբանություն, Հայոց լեզու և գրականություն, Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտություններով բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., ասիստենտ Կ. Պողոսյանը, հ.գ.թ, դոցենտ Ա. Կոբեյյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ընթացքը համարել բավարար:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Նշեց, որ այն քննարկվել է ուսանողների հետ: Ձեկուցողը փաստեց, որ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան մատենավարության վիճակը: Բացի այդ՝ առաջին անգամ ընթացիկ քննությունները կանցկացվեն հատուկ կահավորված լսարաններում, որտեղ կիրականացվի տեսանկարահանում: Բանավոր քննությունների ընթացքը կձայնագրվի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, հ.գ.թ, դոցենտ Ա. Կոբեյյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, դասախոս Շ. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգում ընդգրկված էր նաև ընթացիկ երեք հարց՝

ա) ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման արդյունքները /2017-18 ուստարի, արտադրական և մանկավարժական պրակտիկաներ/ և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության արդյունքների /2017-18 ուստարի/ քննարկման հարցի մասին:

բ) Հումանիտար գիտությունների ֆակուլտետում կայացած արհմիության նախագահի ընտրությունների արդյունքների մասին:

գ) Հումանիտար գիտությունների ֆակուլտետում մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին:

ա) Ընթացիկ առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ ՄԿՈԱ բաժնի կողմից իրականացվել են մասնաճյուղի 2017-2018 ուստարվա պրակտիկանտ-ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների շրջանում իրականացված հարցումների արդյունքների վերլուծություններ: Արդյունքները տրամադրվել են ստորաբաժանումներին: Դեկանը ներկաներին հորդորեց ծանոթանալ վերլուծություններին, իրենց կրթական ծրագրերի ուսանողների առնչվող հատվածների վերաբերյալ կատարել համապատասխան ուսումնասիրություններ, ներկայացնել կարծիքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա. 2017-2018 ուստարվա պրակտիկանտ-ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների շրջանում իրականացված հարցումների արդյունքների վերլուծությունները համարել ի գիտություն,

բ. ամբիոններում կատարել համապատասխան ուսումնասիրություններ և 10-օրյա ժամկետում հանդես գալ առաջարկներով:

բ) Ընթացիկ երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ հոկտեմբերի 15-ին լրացել է ֆակուլտետի արհմիությունի նախագահ Լ. Թումանյանի պաշտոնավարման ժամկետը: Ձեկուցողը նշեց, որ ամբիոնները պատշաճ ժամանակահատվածում ծանուցվել են նոր ընտրությունների վերաբերյալ: Ոչ մի ամբիոնի կողմից թեկնածություն չի ներկայացվել: Չի եղել նաև ինքնաառաջադրվող թեկնածու, ուստի

Ֆակուլտետը նպատակահարմար է գտել կրկին առաջադրելու բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանի թեկնածությունը: Կատարվել է բաց քվեարկություն, որի արդյունքներով վերջինս միաձայն, հինգ տարի ժամկետով վերընտրվել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի արհրյուրոյի նախագահի պաշտոնում:

զ) Ընթացիկ երրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ.Պողոսյանը: Նա նշեց, որ 2018-19 ուստարում ֆակուլտետի կազմում ընտրվել է գիտական խորհրդի նոր կազմ և հիմք ընդունելով 2016թ. մայիսի 27-ի ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհրդի նիստում հաստատված ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆակուլտետի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի II կետի 13-15-րդ ենթակետերը կարիք կա ձևավորել ֆակուլտետի գիտխորհրդի մրցութային հանձնաժողով: Մրցութային հանձնաժողովի կազմի համար զեկուցողը առաջարկեց ներքոհիշյալ անձանց թեկնածությունը՝

1. Թումանյան Լուսինե Վիլիկի – Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ., կրթական ծրագրի պատասխանատու,
2. Գրիգորյան Շուշանիկ Սերգոյի - Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, կրթական ծրագրի պատասխանատու,
3. Գրիգորյան Նաթելլա Սերոժի- Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պ.գ.թ., կրթական ծրագրի պատասխանատու:

Կատարվեց բաց քվեարկություն, որի արդյունքներով միաձայն ընտրվեց ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի վերոնշյալ կազմը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Կ. Պողոսյան

Վ. Աղաբաբյան